

Հաստատված է

ՄՄՆՀԴ-ՇՀԱՊՁԲ 15/4 ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի

2015 թ. << սեպտեմբերի >> <<25>>-ի թիվ <<2>> որոշմամբ

<<Սյունիքի Մարզային Նյարդահոգեբուժական Դիսպանսեր ՓԲԸ >>

Հ Ր Ա Վ Ե Ր

**<<Սյունիքի Մարզային Նյարդահոգեբուժական Դիսպանսեր ՓԲԸ >>-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝
<<ԴԵՂՈՐՑԱՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ >> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ**

Հարգելի մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**<<Սյունիքի Մարզային Նյարդահոգեբուժական Դիսպանսեր ՓԲԸ >>-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝
<<ԴԵՂՈՐՑԱՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ >> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ**

ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
7. Հայտերի բացումը
8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

ՄԱՍ II. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը
4. Հայտի գնային առաջարկը
5. Հայտը պատրաստելու կարգը
6. Հավելվածներ 1-11

<<Սյունիքի Մարզային Նյարդահոգեբուժական Դիսպանսեր >> ՓԲԸ-ն (այսուհետև՝ Պատվիրատու)՝ <<Դեղորայքի և պատվաստանյութերի>> ձեռքբերման նպատակով կազմակերպել է <<ՄՄՆՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/4>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև՝ ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին կարող են մասնակցել սահմանված կարգով <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները: Հայտեր կարող են ներկայացնել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները:

Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Կապան, Բաղաբերդ 48 հասցեով, (պատվիրատուի հասցեն)

փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող <<7>> -րդ աշխատանքային օրվա **06.10.2015թ. ժամը <<11:30>>-ը** և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Գնումների համակարգող՝

Ռուզան Մկրտումյան

Հեռախոս՝ (0285) 5-44-45

Պատվիրատու՝ <<Սյունիքի Մարզային Նյարդահոգեբուժական Դիսպանսեր >> ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ <<srpndisp@yahoo.com>>:

ՄԱՍ I

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում «Սյունիքի Մարզային Նյարդահոգեբուժական Դիսպանսեր ՓԲԸ»-ի կարիքների համար՝ «դեղորայքի և պատվաստանյութերի» ձեռքբերումը, որոնք խմբավորված են «272» չափաբաժինների՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	ամինազին 25մգ
2	տիզերցին 25մգ
3	տիզերցին 1-թ 25մգ 1,0մլ
4	հալոպերիդոլ-դեկանտատ 1-թ 1,0
5	հալոպերիդոլ 1,5մգ
6	հալոպերիդոլ 5մգ
7	հալոպրիլ 1-թ 0,5 % 1,0
8	մոդիտեն-դեպո 1-թ 25մգ1,0
9	տրիֆտազին 5մգ
10	ռիսսետ 2 մգ
11	ռիսսետ 4 մգ
12	էզլոնիլ 100մգ 2մլ
13	էզլոնիլ (էգնիլ) 50մգ
14	դիազեպամ 1-թ 2մլ (Սիբազոն) 0,5 %
15	դիազեպամ 10մգ
16	դիազեպամ 5մգ
17	ֆենազեպամ 1մգ
18	լորազեպամ հաբ 2 մգ (Ապո-Լորազեպամ)
19	տազեպամ 10մգ
20	ռելանիում 10մգ 2,0մլ
21	ատարաքս 25 մգ
22	բենզոնալ 100մգ
23	նատրիումի թիոպենտալ 1գ
24	նատրիումի թիոպենտալ 0,5գ
25	ֆենոբարբիտալ 100մգ
26	կարբա-ֆիլկո 200մգ (կարբամազեպին)
27	մելիպրամին 1-թ 2,0
28	ամիտրիպտիլին 25մգ
29	ռեկսետին (պարոքսետին) 20մգ
30	ցիկլոդոլ 2մգ
31	դեպակին- էնտերիկ 300մգ
32	տրամադոլ-M 5% 2մգ
33	տրամադոլ 50մգ (տրազակ)
34	պիրացետամ 1-թ 20% 5,0

35	պիրացետամ հաբ 0,4
36	լուցետամ 800մգ
37	օքսիբրալ 30մգ
38	ցերեբրոլիզին 5,0
39	ցինարիզին հաբ 25 մգ.
40	կավինտոն հաբ 5մգ
41	կավինտոն Լ-թ 10մգ 2,0
42	սպիրտ բժշկական Լ-թ 96%
43	հեմոդեզ 500,0 Լ-թ
44	հեմոդեզ 250,0 Լ-թ
45	Կետիլեպտ 200 մգ.
46	ռեոպոլիզյուկին 500,0
47	պոլիզյուկին 500,0
48	ռինգերի 500,0
49	նատրիումի քլորիդի Լ-թ 0,9% 500մլ
50	նատրիումի քլորիդի Լ-թ 0,9% 100մլ
51	գլյուկոզա 5% 500,0 Լ-թ
52	գլյուկոզա Լ-թ 40% 5,0
53	վիտամին B1 5%Լ-թ 1,0
54	վիտամին B6 5%Լ-թ 1,0
55	վիտամին B12 Լ-թ 1,0 500մգ
56	նիկոտինաթթու Լ-թ 1% 1,0
57	ասկորբինաթթու Լ-թ 5 % 5 մլ (վիտամին C)
58	ասկոռուտին
59	վիտամին B կոմպլեքս Լ-թ 2,0
60	կալցի D3 նիկոմեդ 500/200
61	կոկարբոքսիլազա Լ-թ 50մգ 2,0
62	կոկարնիտ 3,0
63	կալցիումի քլորիդ Լ-թ 10% 5,0
64	կալցիումի գլյուկոնատ 500մգ
65	կալցի գլյուկոնատ Լ-թ 10 %5,0
66	մագնեզիումի սուլֆատ Լ-թ 5,0 25%
67	նատրիումի թիոսուլֆատ Լ-թ 5,0 30%
68	կորդիամին Լ-թ 25% 2,0
69	կոֆեին նատր. բենզոատ Լ-թ 20% 1,0մլ
70	ստրոֆանտին k Լ-թ 1,0 0,025%
71	դիգօքսին 0,25մգ
72	կամֆորայի սպիրտ 10% 100մլ
73	վալիդոլ 0,06գ
74	կատվախտի ոգեթուրմ 30,0 մլ
75	նիտրոգլիցերին հաբ 0,5մգ
76	անալզին Լ-թ 50% 2,0
77	անալզին 500մգ
78	տեմպալզին 520մգ
79	դիկլոֆենակ 50 մգ
80	դիկլոֆենակ Լ-թ 25մգ 3մլ

81	սպազմալգոն Լ-թ 5,0
82	սպազմալգոն
83	նո-շպա Լ-թ 40մգ 2մլ
84	նո-շպա 40մգ
85	դիբազոլ Լ-թ 1%1,0
86	պապավերին հիդրոխլորիդ Լ-թ 2% 2մլ
87	էուֆիլինի Լ-թ 2,4% 5,0
88	սուլֆոկամֆոկաին 10%Լ-թ 2մլ
89	Էնալսպրիլ 5մգ
90	կապտոպրիլ 25մգ
91	բենզիլ պենիցիլին 1 մլն. միավոր (1 գր.)
92	ցեֆազոլին 1 գր ն/ե մ/մ դեղափոշի ներարկման
93	ամոքսիկլավ հաբ 625 մգ
94	ամպիցիլին 500մգ ֆիլկո
95	պրոզերին 1մլ. 0.05%
96	լուպերամիդ/ իմոդիում կապս/հաբ 2 մգ
97	բրոմհեքսին 8մգ
98	պարացետամոլ (պարա-ֆիլկո) 500մգ
99	մեզիմ-ֆորտե 3500 միավ.
100	դյուֆալակ սուսպենզիա 500մլ
101	կվամատել Լ-թ 20 մգ.
102	կվամատել հաբ 40 մգ
103	ալմագել A 170մլ
104	մալոքս հաբ 400մգ
105	կարսիլ 35մգ
106	Էսենցիալ Լ-թ 5,0
107	Էսենցիալ ֆորտե դ-պատիճ 300մգ
108	ածուխ ակտիվացրած 0,25գ
109	ռեհիդրոն փոշի 18,9գր
110	դեքսամետազոն Լ-թ 5մգ/1մլ
111	դիմեդրոլի Լ-թ 1% 1,0
112	դիմեդրոլ 0,5մգ
113	տետուրամ 0,15մգ
114	անտիկոլ 500մգ
115	վիկասոլ Լ-թ 1% 1,0 մլ.
116	ամինոկապրոնաթթու 5% 250,0
117	դիցլինոն Լ-թ 250մգ 2,0մլ
118	ֆերրում լեկ 100մգ
119	ֆուրոսեմիդ Լ-թ 1% 20մգ/2,0մլ
120	հիպոթիազիդ 25մգ
121	վերոշպիրոն 25մգ
122	դիակարբ հաբ 250 մգ
123	ադրենալին Լ-թ 0,18% 1մլ.
124	ասրոպին Լ-թ 0,1% 1.0
125	սրսկման ջուր Լ-թ 2,0
126	նովոկային Լ-թ 0,5% 2,0

127	թանգիվ բժշկական
128	բամբակ 100գր
129	վիշնևակու քսուք 40գ
130	յոդի 5% 30մլ լուծույթ սպիրտային
131	ջրածնի պերօքսիդի 1-թ 3% 50,0
132	արյան փոխներարկման համակարգ N1
133	ներարկիչ + ասեղ 20 մլ
134	ներարկիչ + ասեղ 10 մլ
135	ներարկիչ + ասեղ 5 մլ
136	ներարկիչ + ասեղ 2 մլ
137	ներարկիչ + ասեղ 1 մլ
138	կատետր երակային G-20
139	կատետր-ֆոլի(տղամ.) G-20
140	ֆլուցինար քսուք 15գ
141	ֆլուոկսետին 20 մգ.
142	ջերմաչափ ձայնային-թվային
143	կլիոն-Դ մոմիկ 100մգ
144	ձեռնոց բժշկական ոչ ստերիլ
145	բժշկական դիմակ
146	նիտիֆոր 60մլ
147	ցիպրոֆլոքսացին 500մգ
148	պանանգին դրաժե
149	գլյուկոզա 1-թ 5% 250,0
150	նատրի-քլոր 1-թ 0,9% 250,0
151	ալլոխոլ
152	էգիլոկ 25մգ
153	ռեվանոլի փոշի 100մլ.
154	մեկսիդոլ 1-թ 5% 100մգ/2,0
155	էգլոնիլ հաբ 200մգ
156	Լ-թիրոքսին հաբ(էութիրոքս)
157	Լ-թիրոքսին հաբ(թիրոքսին) 25մգ
158	կարդի-ասպիրին 300մգ
159	կալիումի քլորիդ 4% 100.0
160	կարդիոմագնիլ 150մգ
161	ամլոդիպին 5մգ
162	պրեստարիում 10մգ
163	էսցիտալոպրամ 10 մգ
164	ամոքսացիլին 500մգ
165	բինտ ստերիլ 7մ*14 սմ
166	կաչուն սպեղանի (22000) 1.25սմ*5մ
167	հեպարին 5մլ.-5000 միավ. (եձ.)
168	լնոմիկոլ քսուկ 40 գ.
169	ցեֆտրիաքսոն 1.0
170	լիդոկաին 10 % 2մլ.
171	լիդոկաին 2 % 2մլ.
172	լազոլվան 30 մգ.

173	մուկալտին
174	կլարիտրոմիցին 0.5
175	մետրոնիդազոլ 0.5
176	ֆուկորցին 30 մլ.
177	լինէքս
178	Սեպտոլէտե
179	դեկատիլեն
180	զինացեֆ 750 մգ.
181	բետադին Լ-թ. 100 մլ. 10%
182	սեննադէքսին
183	բարիումի սուլֆատ 100 գ. (փոշի)
184	կվամատել 20 մգ.
185	նատրիումի քլորիդ 0.9 % 5.0
186	հալվե
187	սոնապակս 25 մգ
188	բենզիլ-բենզոատ 20 % 100 մլ.
189	բետադին մոմիկ 200 մգ.
190	բրոնխոլիտին 125 մլ. (օշարակ)
191	վազելին բժշկական 30 մգ.
192	վալոկորդին կաթիլներ 20 մլ.
193	գալագոլին 0.1 % 10մլ.
194	գեքսիլոկ 0.05% 100 մլ.
195	կլոտրիմազոլ 1 % 20գ.
196	ռինգեր 250.0
197	Օլանգապին 5 մգ.
198	ֆեստալ
199	ազալեպտին 100 մգ.
200	դոնորմիլ 15 մգ.
201	ֆինլէպսին 200 մգ.
202	մելիպրամին 25 մգ
203	ֆեվարին 100 մգ.
204	ֆեվարին 50 մգ.
205	միդոկալմ 150 մգ.
206	նոտրոպիլ 800 մգ.
207	ասկորբինաթթու 500 մգ. (վիտամին C)
208	ֆոլաթթու 1 մգ.
209	կատվախտի հանուկ 0.02 գ.
210	պանանզին 10 մլ.
211	ցիտրամոն Պ
212	լնամիցետին 0.5 մգ.
213	էրիթրոմիցին 100 մգ.
214	կո-տրիմոքսազոլ 480 մգ.
215	ացետիլսալիցիլաթթու 0.5 գ.
216	սեննադէ 0.07 գ.
217	սորբիֆեր 320 մգ/60 մգ.
218	ֆուրոսեմիդ 40 մգ.

219	պլատիֆիլին 1-թ 0.2 % 1մլ.
220	նաֆթիզին 1.0 % 10 մլ.
221	ամիակի 1-թ. 20 մլ.
222	ներարկիչ + ասեղ 2.5 մլ
223	փայտիկ կոկորդի
224	լորինդեն 8 քուրք 15 գ.
225	ֆլուկոնազոլ 150 մգ.
226	քլորամին Բ փոշի
227	սուպրաստին 25 մգ.
228	ցիպրոֆլոքսացին աչքի կաթիլներ 0.3 % 10.0
229	դետրալեքս 500 մգ.
230	պրեդուկտալ MR 35մգ.
231	Ցերուկալ 0.5 % 2.0 մլ.
232	Սմեկտա 3 գ.
233	հիդրոկարտիզոն 1-թ. 5.0
234	Ֆուլաթթու 5մգ
235	դեսմոպրեսին քթակաթիլներ 0.01% 5 մլ
236	Օմնիկ 0.4 մգ
237	օտրիվին քթակաթիլներ 0.1% 10 մլ
238	հղիության թեսթ
239	մերկազոլիլ 0.005 գ.
240	Դիագոլին
241	ակտովեգին 40մգ/մլ 5մլ
242	դիսոլ 400 մլ.
243	ացիկլովիր 200 մգ
244	ֆերոմ լեկ 2 մլ
245	տրուկսալ 25 մգ
246	էզոլանգա 10 մգ
247	Օքսիտոցին
248	Աուգմենտին
249	Դուովիտ
250	Կորդարոն
251	Ֆլոքսադեքս
252	տետրացիկլին քուրք 3գ. 1%
253	միդոկալմ 1-թ 1.0
254	մոքսիցին աչքի կաթիլ 5.0 0.5%
255	վիզիդոլ աչքի կաթիլ 0.5% 5.0
256	Էմոքսիպին 5.0
257	դեքսամետազոն 1-թ 0.1% 5.0
258	ռելիֆ մոմիկ
259	Կատամին
260	Քլորիեքսիդին
261	գլիցերին
262	հեմոսոլ 0,5
263	Օմեգ
264	Բիսակադիլ
265	Ֆամոտիդին
266	Ուրոբեկ
267	Վուրդոն

268	Կատետեր կանացի
269	Պրեդնիգալոն
270	Դիկլակ գել
271	Նիմեսիլ
272	Պերսեն

<<դեղորայքի և պատվաստանյութերի>> տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ <<Մասնակցության իրավունքը>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնք գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում մասնակցի՝

- <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից¹: Նմանատիպ են համարվում Դեղորայքի և պատվաստանյութերի մատակարարումը:

¹ Եթե գնման առարկայի նմանարկայ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը²:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Տեխնիկական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ սույն հրավերով պահանջվող տեխնիկական միջոցների առկայության մասին.

- <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.4) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.³

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

<<Աշխատանքային ռեսուրսներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.6) պայմանագրի կատարման համար սույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած Մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում :

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

² Եթե գնման առարկայի նմանապիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

³ Եթե գնման առարկայի նմանապիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն պարբերության 1-ին և 2-րդ կետերը հրավերից հանվում են:

4. ՀԱՅՏՏՆ ԴԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար: Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող <<7>>րդ աշխատանքային օրվա ժամը <<11:30>>-ն, <<ք. Կապան Բաղաբերդ 48>> հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար <<Ռուզան Մկրտումյան>>: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ Օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

դ իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

ե. իր կողմից հաստատված հայտարարություն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ⁴:

զ. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրը իրականացվելու է գործակալության միջոցով.

է. համատեղ գործունեության պայմանագիրը, եթե Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

5. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու>> կարգի 5.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով <<փոփոխում>> բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

⁴ Մասնակիցը սույն կետով նախատեսված հայտարարությունը հայտով ներկայացնում է, եթե առաջարկում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՅՈՒՄԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ ծանուցվելու օրվան հաջորդող <<7>>-րդ աշխատանքային օրվա ժամը <<11:30>>-ին, <<ք. Կապան Բաղաբերդ 48>> հասցեում:

7.2 Հայտերի բացման նիստում՝

1) նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը:

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկները:

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր Մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս Մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը Մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ Մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե Մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում:

7.2.1 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը:

7.2.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

7.2.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝

ա. գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.2 կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն⁵: Իսկ ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի յուրաքանչյուր խմբաբանակի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվի նաև տվյալ խմբաբանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

7.2.4 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հայտերի բացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի ⁶ փոխարժեքով:

7.2.5 Հանձնաժողովի, Պատվիրատուի և Մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ Մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ Մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը.

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.2.6 Էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

7.2.7 Պահանջի դեպքում Մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը պարունակող փաստաթղթի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած Մասնակցին:

7.3 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

7.4 Եթե սույն հրավերի 7.3 կետով սահմանված ժամկետում Մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

7.5 Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ

⁵ Եթե գնման հայտով ներկայացված փոխյալ գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը գերազանցում է գնումների բազային միավորի 70-ապարիկը, ապա սույն ենթակետը հրավերից հանվում է: Ընդ որում, գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը հաշվարկվում է ըստ չափաբաժինների:

⁶ Սահմանվում է Պատվիրատուի կողմից:

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

2) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետի <<զ>> ենթակետով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

3) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում ներկայացնել նաև լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

7.5.1 Պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված Մասնակիցը:

7.5.2 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

2) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

3) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.6 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը սույն հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասով, որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ Մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը համարվում է հարկային գաղտնիք, բացառությամբ Մասնակցի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների:

7.7 Սույն հրավերի 7.5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանությունն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

7.8 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

8. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

8.1 Սույն հրավերի 7.7 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝

8.1.1 հանձնաժողովը գնահատում է սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

8.1.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և սույն հրավերի 4.3 կետի <<զ>> ենթակետով նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

8.1.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին⁷:

8.1.5 Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովը ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում են սույն հրավերով նախատեսված պայմանները:

Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

8.2. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն հրավերի ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

8.4 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.5 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել Մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու

⁷ Եթե գնման առարկայի նմանափոխ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը և հրավերով <<տեխնիկական միջոցներ>> կամ <<աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշների մասով սահմանված չեն համապատասխան պահանջներ, ապա սույն բաժնի 8.1.1-8.1.3 կետերը հրավերից հանվում են:

աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե Մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) տվյալ Մասնակցի հայտը մերժվում է.

2) Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8.6. Սույն հրավերի 8.5 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.7. Պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են ընթացակարգի արդյունքները:

8.8 Մինչև պայմանագիր կնքելը, Պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայտարարվել՝

1) արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր մասնակիցները.

2) նման հայտարարությունը էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին.

3) նման հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև Պատվիրատուի ինտերնետային կայքում:

8.9 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում <<5>> օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

8.10 Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.11 Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել ամփոփման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն մասի 8.10 կետում նշված արձանագրությանը:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը:

Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում պայմանագրի նախագծում ներառվում են ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

9.3 Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը Պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Ընդ որում, Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

9.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերի 8.9 կետով նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և սույն հրավերի 10.1 կետով նախատեսված ժամկետում

Պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի, իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը⁸, ապա նա գրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է Մասնակիցը, եթե նա հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ գրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

9.5 Մինչև սույն հրավերի 9.4 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

10.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

10.2 Պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի տասը տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով (Հավելված 10):

11. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՑԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

11.1 Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

- 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը⁹.
- 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
- 4) պայմանագիր չի կնքվում:

11.2. Ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

11.3 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում, Պատվիրատուն www.gnumner.am կայքում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.1.1 Յուրաքանչյուր անձ, ով գտնում է, որ Պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի գործողությունների հետևանքով խախտվել են կամ կարող են խախտվել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, իրավունք ունի ահազանգելու գնումների աջակցման կենտրոն ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև կենտրոն) թեժ գծին:

12.1.2 Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման վերաբերյալ կենտրոնի թեժ գծին ահազանգ ստանալու դեպքում՝

